



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< ----->> << ----->> 2018թ.

N -----

<<ԹԵՐԹ ԷՅ ԷՄ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ

Ի պատասխան Ձեր էլեկտրոնային հարցմանը՝ տեղեկացման կարգով հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերի կողմից իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել մարզի թվով 9՝ Դալարիկ, Վաղարշապատ (Էջմիածին), Արևաշատ, Եղեգնուտ, Գեղակերտ, Մուսալեռ, Արշալույս, Ջրառատ և Նոր Արմավիր համայնքներում:

Հսկողության արդյունքում աշխատանքային խմբերի կողմից կազմվել են համապատասխան արձանագրություններ՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակված լիազորությունների, քաղաքաշինության, ինչպես նաև հողօգտագործման բնագավառներում կազմված հարցաշարերի հավելվածներով և դրանց առնչվող հարակից հարցերի ուսումնասիրության տեղեկատվությամբ:


Հսկողության արդյունքները, սահմանված ժամկետներում և կարգով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով ներկայացվել են իրավասու մարմիններին: Արդյունքում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության կողմից հարուցվել է 2 քրեական գործ՝ Եղեգնուտ և Արշալույս համայնքների մասով:

Միաժամանակ հայտնվում է, որ իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներն ամբողջությամբ հրապարակված են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի էլեկտրոնային կայքէջի (<http://armavir.mtad.am/>) <<ՀԱՄԱՅՆՔՆԵՐ>> բաժնի <<ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ>> ենթաբաժնում:

ՄԱՐԶՊԵՏ՝

 Недействительная подпись

Գ.
ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

X 

VERIFIED OCSP 20.09.2018 11:34:36 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

Կապ.՝ Կ. Գրիգորյան
Լ. Հարությունյան

Հեռ. 023721003